



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 09 » 03 2021թ.

№ 08/ԼԱ/ - 125

**Մարտի 1-7-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Մարտի 1-2-ին շրջանների զգալի մասում, 5-ին, 7-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Որոտանի լճ.-ում՝ 29մմ, Գորիսում՝ 19,9մմ, Մարտունիում, Սեմյոնովկայում և Ծաղկահովտում՝ 18մմ, Ջերմուկում՝ 16,6մմ, Հրազդանում և Սիսիանում՝ 15մմ, Արթիկում և Ֆանտանում՝ 13մմ, Դիլիջանում, Ապարան լճայինում և Ամբերդում՝ 12մմ, մնացած շրջաններում՝ 1-11,4մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 1-ին նորմայից բարձր է եղել 1-4 աստիճանով, 2-3-ին նորմայից բարձր՝ 1-3 (առանձին շրջաններում նորմայից ցածր՝ 1-3), 3-4-ին նորմայից բարձր՝ 1-5 (Սյունիքում և առանձին շրջաններում նորմայից ցածր՝ 1-2), 6-7-ին՝ բարձր 2-6 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մարտի 6-ին: Տավուշում, Սյունիքի հովիտներում գրանցվել է +13...+18°C (Մեղրիում՝ +20°C), Արարատյան դաշտում՝ +13...+16°C, Լոռիում, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +7...+12°C (Օձունում և Արենիում՝ +15°C, Գորիսում՝ +14°C, Աշտարակում՝ +13°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +2...+7 (Գյումրիում՝ +10°C, Արթիկում՝ +8°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 3-ին: Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -7...-12°C (Աշոցքում՝ -22°C, Տաշիրում՝ -15°C, Ծաղկահովտում՝ -14°C, Օձունում՝ -6°C), Տավուշում, Կոտայքի, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքում, Արարատյան դաշտում՝ -1...-6°C (Դիլիջանում՝ -9°C, Սիսիանում՝ -8°C, Մեղրիում՝ +2°C):

Մարտի 3-ին և 6-ին Տաշիրում, Գորիսում, Ստեփանավանում և Պուշկինի լճ.-ում դիտվել է քանո ուժգնացում՝ 13-18մ/վրկ, պողթկումները՝ մինչև 16-22 մ/վրկ:

Մարտի 8-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնայինում 129սմ, Որոտանի լճ.-ում՝ 98սմ, Ամբերդում՝ 70սմ, Ջերմուկում՝ 60սմ, Հրազդանում՝ 46սմ, Անանունի լճ.-ում՝ 42սմ, Սեմյոնովկայում՝ 38սմ, Ապարան լճայինում՝ 37սմ,

Ճամբարակում՝ 30սմ, Պուշկինի լցք.-ում և Ամասիայում՝ 29սմ, Աշոցքում՝ 26սմ, Սևանում՝ 23սմ, Տաշիրում՝ 19սմ, Մասրիկում՝ 17սմ, Ծաղկահովտում՝ 16սմ, Ապարանում՝ 15սմ, Ստեփանավանում՝ 14սմ, Ֆանտանում՝ 12սմ, մնացած շրջաններում՝ 1-9սմ: Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.57մ (07.03.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 13 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան
Հեռ.՝ 012 31 79 29